ՀԱՅԱՍՏԱՆԸ և ԱՐՑԱԽԸ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ և ՆԵՐՔԻՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ*

ՀՏԴ 334.02:338.43 (479.24)

Մանասերյան Թաթուլ

«ԱՅԼԸՆՏՐԱՆՔ» հետազոտական կենտրոնի ղեկավար
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
tatoulm@gmail.com
Երևան, Հայաստանի Հանրապետություն

Տարածաշրջանում Հայաստանի եւ Արցախի տնտեսությունների ինտեգրման հեռանկարները վերլուծելիս կարեւոր է հաշվի առնել այն փաստը, որ, ի տարբերություն Հայաստանի Հանրապետության, Արցախը, որպես միջազգային հանրության կողմից չճանաչված պետություն, զրկված է ցանկացած երկրի հետ պաշտոնապես եւ ուղղակիորեն կոոպերացիոն կապեր հաստատելու հնարավորությունից: Արտաքին աշխարհի հետ միակ կապը թերևս հումանիտար հարաբերություններն են : Ուստի, բացի անվտանգության երաշխավորի գործառույթից, Հայաստանի Հանրապետությունը միակ պետությունն է, որը կարող է օգնել Արցախին իրեն ներկայացնել արտաքին շուկաներում: Դա, իր հերթին, պահանջում է տնտեսական դիվանագիտության առկա զինանոցի ողջամիտ օգտագործում, չէ որ Արցախը արտաքին աշխարհին կարելի է ներկայացնել միայն միջնորդավորված:

Այսպիսով, անհրաժեշտ է ծանոթանալ և վերլուծել ժամանակակից ինտեգրացիոն գործընթացների հետ կապված փուլերը, բացահայտել տարածաշրջանային ինտեգրման հիմնական միտումները, ներկայացնել Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ազգային մրցակցային առավելությունների իրականացման հնարավորությունները, դրանց իրագործման անհրաժեշտությունը, ինչպես նաև վերլուծել նման ձևաչափով Հայաստանի և Արցախի ինտեգրման հեռանկարները տարածաշրջանում: Այս ամենին կարող է նպաստել Հյուսիս-Հարավ ավտոմայրուղու գործարկումը, ինչպես նաև եռակողմ համագործակցության հնարավորությունների օգտագործումը՝ ՀՀ-Իրան-Հունաստան: Վերջապես, պահպանելով ամուր և ամենօրյա կապերը Ռուսաստանի հետ, անհրաժեշտ է նաև մտածել Հայաստանի ռազմավարական գործընկերության դիվերսիֆիկացման մասին:

Բանալի բառեր. Արցախ, տարածաշրջանային ինտեգրում, ԵԱՏՄ, մրցակցային առավելություններ, 44-օրյա պատերազմ:

---

* Հոդվածը ներկայացվել է 9.09.2022
Տպագրության է երաշխավորել Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Վարդան Բոստանջյանը:13.09.2022:
Հոդվածը տպագրության է ընդունվել 20.09.2022:

Ներածություն

Տարածաշրջանում Հայաստանի և Արցախի տնտեսությունների ինտեգրման հեռանկարները վերլուծելիս կարևոր է հաշվի առնել այն իրողությունը, որ, ի տարբերություն Հայաստանի Հանրապետության, Արցախը, որպես միջազգային հանրության կողմից չճանաչված պետություն, զրկված է որևէ երկրի հետ պաշտոնապես և անմիջականորեն համագործակցության կապեր հաստատելու հնարավորությունից: Միակ կապն արտերկրի հետ թերևս մարդասիրական օգնությանն առնչվող հարաբերություններն են: Հետևաբար, բացի անվտանգության երաշխավորի գործառույթից, Հայաստանի Հանրապետությունը միակ պետությունն է, որ կարող է օգնել Արցախին՝ ներկայանալու արտաքին շուկաներում: Սա, իր հերթին, պահանջում է տնտեսական դիվանագիտության գոյություն ունեցող զինանոցի խելամիտ օգտագործում, քանի որ Արցախն արտաքին աշխարհին հնարավոր է ներկայացնել միայն միջնորդված ձևով: Բացի այդ, Արցախի արտաքին ինտեգրման գործընթացներին մասնակից դարձնելու խնդիրը քննարկելուց առաջ, նպատակահարմար է վերլուծել Հայաստան – Արցախ տնտեսական ինտեգրման իրական հնարավորությունները: Սա ևս դյուրին չէ այն պատճառով, որ երկու տնտեսություններն ինտեգրելու համար հարկավոր է գտնել մեկը մյուսից տարբերվող մասնագիտացման ճյուղեր և մրցակցային առավելություններ, մինչդեռ երկուսի դեպքում էլ ընդհանրություններն ավելի շատ են, քան սակավաթիվ տարբերություններն ու առանձնահատկությունները: Ավելին, գյուղատնտեսության, հանքարդյունաբերության, էներգետիկ ոլորտներում Արցախի փորձն ավելի ուսանելի է, ըստ որում, չավարտված պատերազմի մեջ գտնվող Արցախում մինչև 2020թ. հաճախակի և սովորական երևույթ է եղել երկնիշ թվով տնտեսական աճը: Իսկ հացահատիկի և այլ սննդամթերքի տարբեր տեսակներով Արցախը շոշափելի մասնակցություն է ունեցել Հայաստանի պարենային անվտանգության ապահովման գործին: Քանի որ Հայաստանի և Արցախի մրցակցային առավելությունները միմյանցից շատ բանով չեն տարբերվում, նպատակահարմար է մտածել միասնական, ընդհանուր շուկայի ձևավորման հնարավորությունների մասին: Սա թույլ կտա կատարել մարդկային, հանքահումքային, արտադրական և ֆինանսական ռեսուրսների ընդհանուր հաշվառում և գույքագրում, վեր հանել երկու տնտեսություններում առկա ուժեղ կողմերը և մրցունակ ճյուղերը, որոնք կօգնեն բավարարել ներքին պահանջարկը և համատեղ դուրս գալ արտաքին շուկաներ՝ ընդհանուր ռազմավարությամբ, ինչպես նաև դասակարգել խոցելի և թույլ կողմերը, հնարավորինս դիվերսիկացնել ներմուծվող ապրանքների աղբյուրներն ու աշխարհագրությունը՝ նվազեցնելու կախվածությունն առանձին վերցրած երկրներից: Այս մոտեցումը թույլ կտա միասնական քաղաքականություն մշակել և իրագործել արտաքին տնտեսական հարաբերություններում, հստակեցնել այս ասպարեզում հնարավոր գործընկերների և հիմնական մրցակիցների կամ հակառակորդների շրջանակը[1]:

[1] Համեմատաբար բաց առևտրային ռեժիմ իրականացնող երկրներում ներմուծման մաքսատուրքերի միջին մակարդակը 10%-ից պակաս է, իսկ քանակական սահմանափակումները ծածկում են ներմուծման 25%-ից պակաս մասը:Ազատ առևտրի կողմնակիցները, փաստարկներ բերելով հովանավորչության դեմ, պնդում են, որ հովանավորչությունը տանում է ազգային տնտեսության քայքայման, ծնում է, այսպես կոչված՝ էկոնոմիկայի սկլերոզ: Օտարերկրյա ապրանքների ներմուծ-

Այս ամենը վկայում է, որ անհրաժեշտ է համակողմանիորեն ուսումնասիրել, մի կողմից, Հայաստանի հնարավորություններն արտաքին շուկաներ դուրս գալու առումով, իսկ մյուս կողմից՝ բացահայտել Արցախի տնտեսության մրցակցային առավելությունները, որոնք կարող են այս կամ այն ձևաչափով Հայաստանով միջնորդված իրացնել արտաքին շուկաներում:

Մեթոդաբանություն

Արցախի մրցակցային առավելությունների մասին խոսելիս պետք է հիշել, որ երիտասարդ հանրապետությունը ժառանգել է ամբողջությամբ ավերված տնտեսություն՝ որպես հետեւանք Խորհրդային միության փլուզման և պարտադրված ավերիչ պատերազմի, ուստի տնտեսության վիճակն այդ ժամանակ կարելի է գնահատել հետեւյալ կերպ՝

- կայուն իրացման շուկաներից զրկված, մեծամասամբ ավերված արդյունաբերություն,
- սննկացած գյուղատնտեսական տնտեսություններ՝ սովխոզներ եւ կոլեկտիվ տնտեսություններ,
- տարիներով չմշակված այգիներ, էրոզիայի ենթարկված հազարավոր հեկտար հողատարածքներ եւ պարապուրդի մատնված գյուղմթերք վերամշակող ձեռնարկություններ[1]:

Վերլուծություն

Տնտեսության վերականգնման գործընթացն Արցախում սկսվեց և իրականացվեց տնտեսության վերափոխման գործընթացներին զուգահեռ՝ Հայաստանի Հանրապետության հետ համատեղ նոր տնտեսական հարաբերությունների ձևավորմամբ և զարգացմամբ: Անցած տարիների ընթացքում իշխանությունները հետեւողականորեն իրա-

---

ման կրճատումը թուլացնում է մրցակցային պայքարը, սպանում նորարարության ոգին: Հովանավորչությունը վնաս է հասցնում սպառողների շահերին: Մաքսատուրքերի միջոցով բարձրացվում են ներմուծվող ապրանքների գները, որը այլ հավասար պայմաններում հարվածում է սպառողական զամբյուղին: Այն վնասում է միջազգային տնտեսական հարաբերություններին (ՄՏՀ-ին): Իր ծայրահեղ ձևում այն վերաճում է տնտեսական ավտարկիայի, որի դեպքում երկրները ձգտում են սահմանա փակել միայն այն ապրանքների ներմուծումը, որոնց արտադրությունը տվյալ երկրում հնարավոր չէ կազմակերպել: Արտահանումն իր հերթին թույլատրվում է այն չափով, որչափով հնարավոր է ապրանքների ներմուծումը: Ազատ առևորի կողմնակիցները պնդում են, որ ազատ առևտուրը նպաստում է համեմատական առավելությունների հիման վրա միջազգային առևտրին երկրների մասնակցությանը, նպաստում է աշխատանքի միջազգային բաժանման խորացմանը՝ արտադրության մասնագիտացումից բխող բոլոր դրական հետևանքներով, ներքին շուկայի ընդլայնմանը, զանգվածային արտադրության կազմակերպմանը: Ներքին շուկայի ազատությունն իջեցնում է ապրանքների գները, որի հետևանքով էլ ընդլայնվում է սպառողական շուկան, ազատ առևտուրը տանում է համաշխարհային տնտեսության մեջ մրցակցության սրմանը, որի հետևանքով ամբողջ համաշխարհային տնտեսության մասշտաբով գներն իջնում են: Դա բարենպաստ է հատկապես համաշխարհային տնտեսության թույլ օղակների տնտեսական զարգացման համար:

[1]https://aparaj.am/%d5%a1%d6%80%d6%81%d5%a1%d5%ad%d5%ab-%d5%b4%d6%80%d6%81%d5%a1%d5%af%d6%81%d5%a1%d5%b5%d5%ab%d5%b6-%d5%a1%d5%bc%d5%a1%d5%be%d5%a5%d5%ac%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%b8%d6%82%d5%b6%d5%a8-%d5%b7%d5%a1/

կանացրել են տնտեսության զարգացմանն ուղղված բազում ծրագրեր: Ինչպես նաեւ մեծածավալ ռեսուրսներ են ներդրել ենթակառուցվածքների ձեւավորման ու զարգացման համար: Զարգացման հիմնական ուղղություններից կարելի է առանձնացնել արդյունաբերությունը՝ մասնավորապես հանքարդյունաբերությունը, թեթեւ եւ սննդի արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, էներգետիկան, զբոսաշրջությունը, ինչպես նաև զարգացման լուրջ հնարավորություններ ունեցող շինարարությունը: Դրանք այն ճյուղերն են, որոնք իրական դերակատարություն ունեն ՀՆԱ-ի ձեւավորման գործում: Մասնավորապես, էներգետիկ համակարգը հանդիսանալով տնտեսության զարգացման համար անհրաժեշտ ենթակառուցվածք ԱՀ-ում, դիտվում է նաև որպես գերակա ճյուղ, որում էլեկտրաէներգիայի արտադրությունը հանդիսանում է հիմնական ուղղություն: Մինչեւ 2008թ ԱՀ-ում գործում էր միակ՝ Խորհրդային ժամանակներում կառուցված Սարսանգի ՀԷԿ-ը, 50 ՄՎտ հզորությամբ եւ 100 մլն ԿՎտ տարեկան արտադրողականությամբ, սակայն 2008թ սկսած ԱՀ կառավարությունը ջրային ռեսուրսների ճկուն կառավարման համատեքստում ձեռնամուխ եղավ հիդրոէներգետիկայի բնագավառի 2 հիմնական ՝ Արցախ ՀԷԿ և Սյունիքի կասկադ նախագծերի կյանքի կոչմանը: Այդ ընթացքում կառուցվեցին 8 փոքր ՀԷԿ եւ այսօր ԱՀ-ում արտադրվող էլեկտրաէներգիայի միջին տարեկան ծավալը մինչև 2020թ. կազմում էր 220 մլն ԿՎտ/ժ էլեկտրաէներգիա եւ ակնկալվում է սպառման տարեկան 7տոկոս աճ: Արցախի տարածքում հիդրոէներգետիկայի հնարավորությունները միջինում գնահատվում էր 500 մլն ԿՎտ/ժ, ինչ այսօր գրեթե երեք անգամ նվազել է: Գտնվելով ՀՀ էլեկտրական ցանցերի հետ միեւնույն համակարգում էլեկտրաէներգետիկայի արտադրության ծավալների աճը ունի երաշխավորված սպառում: Այդ առումով բնագավառը շարունակում է հետաքրքրել ներդրողներին: Էներգետիկ անկախության ապահովման տեսանկյունից կարեւորվում են նաեւ այլընտանքային էներգիայի այլ աղբյուրների զարգացմանն ուղղված նախաձեռնությունները: Երկրորդային հումքից բրիկետների եւ պելլետների արտադրությունը ԱՀ-ում նոր եւ հեռանկարային ուղղություն է: Շուկայի իրական սպառման ծավալները, ինչպես նաեւ հումքային բազայի առկայությունը, այս կամ այն բնագավառում նոր հումքային բազայի առկայությունը, այս բնագավառում նոր ներդրումներ կատարելու հնարավորություն են ընձեռում[1]:

Մինչև 44-օրյա պատերազմը Արցախը տիրապետում էր տնտեսական, մարդկային և բնաշխարհագրական անհրաժեշտ ներուժի՝ ժամանակի պահանջներին համապատասխան արդյունաբերական արտադրությունների կազմակերպման համար: Մասնավորապես այս առումով անհրաժեշտ առանձնացնել հանքարդյունաբերության ոլորտը: Արցախի ընդերքը հարուստ է օգտակար հանածոներով: Տասնամյակների ընթացքում ուսումնասիրվել եւ հայտնաբերվել են մոտ 300 հանքավայր, երեւակում եւ հանքայնացման կետ: Արցախն ունի վառելիքային, մետաղական, ոչ մետաղական օգտակար հանածոների, խորքային ջրերի պաշարներ:

[1]Արցախի տնտեսական ներուժը «նոր սահմանազատումից» հետո. սահմանից անդին մնացած հնարավորություններ... www.Investmagazine.am

Աղյուսակ 6. Ընտանի կենդանիների գլխաքանակը 2020 թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ՝ ըստ Արցախի վարչական շրջանների[1]

ԱՀ շրջանները 2020 թ. սկզբին	Կով	Խոզ	Ոչխար և այծ	Թռչուն
Ստեփանակերտ	101	1350	150	32000
Ասկերան	3901	5750	11112	123479
Հադրութ	2808	4982	8812	50900
Մարտակերտ	3165	3372	7990	55716
Մարտունի	3449	7467	8001	165748
Շահումյան	1305	827	1136	7706
Շուշի	482	408	4817	9920
Քաշաթաղ	4737	4313	21433	29796
Ընդամենը	**19948**	**28469**	**63451**	**475265**

2002 թվականից ի վեր գործել է դեռեւս խորհրդային տարիներին հետախուզված Դրմբոնի ոսկու հանքը, որի արդյունահանման ծավալները տարիների ընթացքում կազմել են արդյունաբերության ծավալների մոտ 35 տոկոսը եւ տարբեր տարիներին երկրի ՀՆԱ-ի 5-10 տոկոսը: Հետագայում մեծ աշխատանքներ ծավալվեցին նաև Կաշենի պղնձի և Կովսականի ոսկու հանքավայրերում: Երկրում շահագործվել են մի շարք քարհանքեր, որոնք քարի վերամշակման մի քանի տասնյակ տեղական կազմակերպությունների ապահովել են որակյալ հումքով: Վերջիններիս արտադրանքը իրացվել է ոչ միայն տեղական շուկայում, այլ նաեւ հաջողությամբ արտահանվել է: Այդ ծավալները զգալիորեն կրճատվել են, սակայն ակնկալում է, որ առաջիկայում հանարդյունաբերությունը կպահպանի ՀՆԱ-ում իր կայուն տեսակարար կշիռը և առաջադեմ տեխնոլոգիաների կիրառմամբ բնական պաշարների օգտագործման վրա հիմնված արտադրությունների կազմակերպումը շահեկան կլինի և՛ ներդրողների, և՛ տնտեսության համար:

Հումքառեսուրսային գործոնի տեսանկյունից առավել գրավիչ են գյուղատնտեսությունը եւ գյուղմթերքների հետագա վերամշակումը: Արցախն իր գոյության ողջ ընթացքում դիտվել է որպես ագրարային երկիր: Արցախյան պատերազմի, ինչպես նաեւ հողերի մասնավորեցման գործընթացով պայմանավորված գյուղատնտեսության մեջ իշխող դերակատարությունն անցավ տնային տնտեսություններին: Ինչպես մսի, այնպես էլ բանջարաբոստանային մշակաբույսերի արտադրությունը մասամբ իրականացվում էր տնային տնտեսությունների կողմից: 2007թ իշխանությունները գյուղատնտեսության զարգացման նպատակով ընդլայնեցին պետական աջակցության ծրագրերը՝ կիրառելով նոր մեխանիզմներ: Հիմնվեց գյուղի եւ գյուղատնտեսության աջակցության հիմնադրամը, որի միջոցով այս ընթացքում մոտ 22մլդ դրամ ուղղվեց գյուղատնտեսական ծրագրերի իրականացմանը: Ստեղծվեցին փորձարարական տնտեսություններ, հիմնվեցին հիմնադրամին կից մեքենատրակտորային կայաններ եւ ռեգիոնալ ագրոքիմիկատների եւ սերմերի պահեստային տնտեսություններ: Տնտեսվարող սուբյեկտներին, որոնք զբաղվում են անասնապահությամբ, այգեգործությամբ եւ հացահատիկային մշակաբույսերի արտադրությամբ հիմնադրամի միջոցով իրականացվում է տրամադրված վարկային ռեսուրսների տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորում:

[1] http://stat-nkr.am/

Արդյունքում գյուղատնտեսությունն ապահովել է երկրի ՀՆԱ-ի մոտ 15 տոկոսը: Մինչ պատերազմը գյուղօգտագործման ցանքատարածքները կազմել են մոտ 64 000 հա: Ռազմավարական նշանակություն ունեցող «Արաքսի հովիտ» ծրագրով նպատակ էր հետապնդվում ընդլայնել այդ հողատարածքները՝ բնակլիմայական առումով առավել նպաստավոր հողատարածքների հաշվին: Այս առումով Գյուղի եւ գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի ծրագրերով հազարավոր հեկտար էռոզիայի ենթարկված հողատարածքներ բերվում են արտադրական տեսքի: Արտադրվող հացահատիկն ու մսամթերքը գերազանցում էին ներքին պահանջարկը, եւ իրականացվում էր արտահանում Հայաստան, որտեղ, թե հացահատիկի եւ թե մսամթերքի ներմուծման ծավալները գերազանցել են ներքին արտադրությունը: Ի դեպ՝ Արաքսի հովտում հացահատիկի արտադրությամբ զբաղվելը բարձր շահութաբերությամբ բիզնես ուղղություն էր: Ներդրումային առումով այն ավելի գրավիչ դարձնելու համար ստեղծվել էր ռեգիոնալ մասնագիտացված մեքենատրակտորային կայան: Գյուղատնտեսության մյուս կարեւոր ուղղությունը այգեգործությունն է: Շուկայում առկա մեծ պահանջարկը հնարավորություն է ընձեռել գյուղացիական տնտեսություններին զբվաղվել նռան այգիներ հիմելով: Անգամ այսօր Արցախում արտադրված նուռն իրացվում է դեֆիցիտի պայմաններում, որը այս ճյուղին լայն հնարավորություններ է ընձեռում թափ հավաքելու համար: Սա ներդրումային առումով գրավիչ է, քանի որ այս արտադրանքի բավարար ծավալների առկայությունը կբերի նոր բիզնես գաղափարների կյանքի կոչմանը:

Թեթև արդյունաբերությունը նոր զարգացող ուղղություն է: Այս բնագավառում կայացած ձեռնարկությունը «Արցախ կարի-կոշիկի արտադրական միավորում» փակ բաժնետիրական ընկերությունն է, որը հետագա ընդլայնում չի ունեցել, քանի որ գործունեությունը իրականացրել է միայն պետական պատվերների շրջանակում: Այսօր, կարևորելով ոլորտը նաեւ աշխատատեղերի ստեղծման տեսակետից, կյանքի է կոչվում թեթեւ արդյունաբերության բնագավառում պիլոտային մի ծրագիր, որը անվանվել է «Ղարմետաքս-կոմբինատ. Բիզնես միջավայր»: Ներդրողների համար այս բնագավառը գրավիչ դարձնելու լավագույն միջոց է ընտրվել կոմունիկացիոն բոլոր տարածքների տրամադրումը: Այս գաղափարը նվազագույնի է հասցնում բիզնես ծրագրերով պահանջվող հիմնական կապիտալում ներդրումների ծավալը, սահմանափակվելով միայն տեխնոլոգիաներում պահանջվող ներդրումներով, ինչի շնորհիվ կրճատվում է վերջիններիս հետ գնման ժամկետը: Այս պիլոտային ծրագիրը համարվում է կայացած միայն այն պարզ պատճառով, որ այսօր այդ տարածքում արդեն գործում են կայացած 3 արտադրություններ (բրդյա թելի արտադրություն, բամբակյա ու կիսաբամբակյա կտորեղենի արտադրություն եւ ձեռագործ գորգերի արտադրություն): Վերջինս մեր մշակույթի անբաժանելի մասն է և մենք մեծ կարեւորություն է տրվում դրա զարգացմանը: Խրախուսվել են նաև թեթև արդյունաբերության բնագավառի այն ներդրողները, որոնք ստեղծել են կայուն ներքին շուկա, ինչպես նաեւ իրենց շուկաներն են գտել Արցախից եւ ՀՀ սահմաններից դուրս: Սննդի արդյունաբերության զարգացմանը նպաստել է կայուն ներքին շուկան և գյուղմթերքների վերամշակման ավանդույթը, որը գալիս է խորհրդային տարիներից: Այսօր Արցախում սննդի արդյունաբերության ոլորտում գործում են կայացած ընկերություններ, որոնք ունեն կայուն ներքին և արտաքին շուկա, ուստի գյուղմթերքների վերամշակումը կշարունակի մնալ գրավիչ ներդրողների համար: Բուսաբուծության եւ անասնապահության հետագա աճին զուգընթաց, այս ճյուղն ունի ընդլայնվելու որոշակի հնարավորություններ: Այսօր ևս արտադրական ծավալները զիջում են արտաքին շուկայի պահանջարկին եւ ակնկալվում

է, կայուն խաղաղություն հաստատվելու պարագայում, սննդի վերամշակման բվանագավառում նոր ներդրողների մասնակցություն: Այս ճյուղի զարգացմանը նպաստում է նաեւ Արցախում աճող հատապտուղների բազմազանությունը:

Վերջին մի քանի տարիների ընթացքում Արցախ այցելող զբոսաշրջիկների թվաքանակի աճը հիմք է հանդիսացել խոսելու ճյուղի հեռանկարների մասին: Թեև Քարվաճառով Արցախը Հայաստանին միացնող ռազմավարական ճանապարհի և Ստեփանակերտի օդանավակայանն այսօր չեն գործում, զբոսաշրջությունը խաղաղ պայմաններում կարող է զարգանալ հետևյալ ուղղություններով. էթնոտուրիզմ, էկոտուրիզմ, մշակութային տուրիզմ, արկածախնդրային տուրիզմ և այլն: Տուրիզմի այս տեսակները միշտ գրավիչ են եղել ինչպես երկրագնդի տարբեր վայրերում ապրող հայության համար, այնպես էլ օտաերկրացիների համար:

Արցախի համար տուրզմի զարգացումը գերակա ուղղություն է, եւ պետք է շարունակել ներդրումներ կատարել այս ոլորտում, եւ խրախուսել մասնավոր սեկտորի այն ներկայացուցիչներին, որոնք ներդրումներ կկտարաեն այս բնագավառում[1]:

Այս ամենով հանդերձ, Արցախի մրցակցային առավելությունը շարունակելու է գիտելիքի եւ էկոլոգիական միջավայրի վրա հիմնված տնտեսությունը: Կարևոր է աջակցել տնտեսության ցանկացած ճյուղում գործունեություն ծավալած այն սուբյեկտներին, որոնք լուծելու են սոցիալական կարեւոր խնդիր՝աշխատատեղերի ստեղծման, եւ նպաստելու են ԱՀ արտահանման ծավալների ավելացմանը:

Պետք է նկատել, որ Հայաստանի Հանրապետության համար համաշխարհային տնտեսությանն ինտեգրվելու լիարժեք հնարավորություն ստեղծվեց միայն նախկին ԽՍՀՍ-ի փլուզումից հետո: Անդամակցությունը միջազգային բազմաթիվ կազմակերպությունների, տարածաշրջանային ինտեգրման որոշ խմբավորումների, ինչպես նաև միջազգային բազմաբնույթ համաձայնագրերի ստորագրումը վկայում են, որ Հայյաստանի Հանրապետությունը, որպես պետություն, առաջնորդվում է քաղաքակիրթ աշխարհի որդեգրած տնտեսական գործունեության կանոններով:

Աղյուսակ 7. Արցախի արդյունաբերական արտադրանքի ծավալն ըստ շրջանների[2]

Արցախի Հանրապետության շրջանները 2020 թ. սկզբին	Արդյունաբերական արտադրանքը 2018 թ. (աշխատանք, ծառայություն)	
	Ծավալ (մլն դրամ)	Կառուցվածք (%)
Ստեփանակերտ	35534.8	28.4
Ասկերան	4044.2	3.2
Հադրութ	2307.3	1.9
Մարտակերտ	72988.2	58.4
Մարտունի	4520.4	3.6
Շահումյան	1700.8	1.4
Շուշի	478.4	0.4
Քաշաթաղ	3432.0	2.7
Ընդամենը	**125006.1**	**100**

Ամբողջությամբ Արցախի Հանրապետության տիրապետության տակ գտնվող վարչական շրջաններ:
Առավելապես Արցախի Հանրապետության տիրապետության տակ գտնվող վարչական շրջաններ:
Մասամբ Արցախի Հանրապետության տիրապետության տակ անցած վարչական շրջաններ:
Առավելապես Ադրբեջանի Հանրապետության տիրապետության տակ անցած վարչական շրջաններ:
Ամբողջովին Ադրբեջանի Հանրապետության տիրապետության տակ անցած վարչական շրջաններ:

[1] Նույն տեղում:
[2] http://stat-nkr.am/

Ավելին, ինտեգրումը համաշխարհային տնտեսությանը նշանակում է, որ միջազգային հանրությունն ընդունում է Հայաստանին որպես շուկայական բարեփոխումներ իրականացրած երկրի: Սակայն անառարկելի է նաև այն իրողությունը, որ ազատական տնտեսական քաղաքականությունը, շուկայական տնտեսությանն անցման «շոկային թերապիայի» մոդելի կիրառումը, օրենսդրական բարեփոխումները, ապապետականացման գործընթացները տնտեսության զարգացման հաջողությունների և դրական միտումների հետ մեկտեղ երկրում ստեղծեցին սոցիալական, տնտեսական այնպիսի իրավիճակներ, որոնք դեռևս լուրջ կարգավորման կարիք ունեն:

Ինչ վերաբերվում է արտաքին առևտրային քաղաքականությանը, որը երկրների կողմից իրականացվող միջոցառումների կարևոր համակարգ է, որով ընդլայնվում կամ սահմանափակվում են օտարերկրյա ապրանքների՝ տարբեր շուկաներ ներթափանցելու հնարավորությունները, ապա այս իմաստով Հայաստանը բավական երկար ճանապարհ է անցել: Ներկայումս ՀՀ արտաքին առևտրային քաղաքականության նպատակներից կարելի է առանձնացնել աշխատանքի միջազգային բաժանման մեջ գործուն մասնակցությունը, երկրից արտահանման ծավալների ավելացումը և ներմուծման աղբյուրների դիվերսիֆիկացումը, ինչպես նաև երկրի ապահովումը անհրաժեշտ ռեսուրսներով (հումքով, էներգակիրներով, պահանջվող ապրանքներով և ծառայություններով և այլն):

Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրային քաղաքականությունը ձևավորվել և իրականացվում է կառավարության կողմից՝ ազատական սկզբունքների հիման վրա, որը նպատակաուղղված է ՀՀ ինտեգրմանը համաշխարհային տնտեսությանը: 1990-ական թթ. ՀՀ արտաքին տնտեսական կապերում տեղի ունեցան էական տեղաշարժեր, որոնք դարձան նոր տիպի գործընկերական հարաբերությունների հիմնական գործոնը: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո խզվեցին նախկին կոոպերացված տնտեսական կապերը, բազմաթիվ արդյունաբերական ձեռնարկություններ կազմալուծվեցին՝ վերջնական արտադրանք թողարկելու հնարավորու թյունների բացակայության պատճառով: Պատերազմը, շրջափակումը, տնտեսական բարեփոխումների ոլորտում տեղ գտած բացթողումներն արդեն անկախացման առաջին տարիներին արտաքին առևտրային շրջանառությունը կրճատեցին ավելի քան 16 անգամ: Ցանկացած երկրի համար տնտեսական աճի և արտահանման շուկաների ընդլայնման տեսանկյունից չափազանց կարևոր նշանակություն ունի տարածաշրջանի երկրների հետ տնտեսական սերտ համագործակցության զարգացումը, որը, ինչ խոսք, առաջին հերթին նպաստում է այդ երկրների տնտեսությունների ինտեգրման խորացմանը:

Ներկայումս Հայաստանն անդամ է տարածաշրջանային երեք կազմակերպությունների՝ ԵԱՏՄ-ին, ԱՊՀ-ին և Սևծովյան տնտեսական համագործակցությանը: Խոստումնալից են նաև Հայաստան-Եվրամիություն փոխհարաբերությունները, հատկապես՝ 2017թ. ԵՄ-ի հետ ստորագրած Համապարփակ և ընդլայնված համագործակցության համաձայնագրի շրջանակներում: Փորձեր են կատարվում ակտիվացնելու համագործակցությունն Իրան-Հայաստան-Թուրքմենստան ձևաչափով, ինչպես նաև Հունաստան Վրաստան շրջանակներում, թեպետ գործուն և արդյունավետ համագործակցության մասին խոսելը դեռևս վաղ է: Անկախացմանը հաջորդող տարիներին Հայաստանը առևտրատնտեսական համագործակցության համաձայնագրեր է կնքել ավելի քան 100 երկրների հետ: ԱՊՀ անդամ-երկրների՝ Ռուսաստանի,Ղրղզստանի, Թուրքմենիայի, Վրաս-

տանի, Ուկրաինայի, Բելառուսի,Ղազախստանի հետ կնքվել են ավելի քան 70 երկկողմանի առևտրատնտեսական պայմանագրեր: Ազատ առևորի երկկողմանի համաձայնագրեր է ստորագրվել ԱՊՀ վեց երկրների հետ: Առևտրի և համագործակցության համաձայնագրեր են ստորագրվել Եվրա միության անդամ-երկրների (ԵՄ), ԱՄՆ-ի, Կանադայի, Արգենտինայի, Չինաստանի, Հնդկաստանի, Իրանի, Արևելյան եվրոպայի և Մերձավոր Արևելքի մի շարք երկրների հետ, որոնք հիմնականում ԱՀԿ անդամ են:

Այսպիսով, համաշխարհային տնտեսության արդի զարգացումներից Հայաստանի Հանրապետությունը անմասն մնալ չի կարող դա ժամանակի հրամայականն է: Հանրապետությունը տարեցտարի վստահություն է ձեռք բերում միջազգային շուկայում որպես կանխատեսելի ևվստահելի գործընկեր, որն էլ, անշուշտ, նպաստում է երկրի ներդրումային գրավչության բարձրացմանը, տնտեսական աճին, բնակչության կենսամակարդակի բարձրացմանը: Արտաքին առևտրային քաղաքականության հիմնական նպատակը տվյալ երկրի համար առավելագույն շահ ապահովելն է, անկախ այն բանից, թե երկիրն ինչպիսի քաղաքականություն է վարում՝ ազատ առևտրայի՞ն, թե՞ հովանավորչական[1]:

Սկսած 1995 թ. ՀՀ տնտեսության կայունացումը որոշակի դրական ազդեցություն է թողել արտաքին առևորային հարաբերությունների վրա: ՀՀ արտաքին առևտրային կապերի զարգացումն ուղեկցվում է ինչպես աշխարհագրական ընդլայնմամբ, այնպես էլ ապրանքային կառուցվածքի փոփոխություններով: 2000-ականների սկզբից մինչև գլոբալ ֆինանսական ճգնաժամը Հայաստանի ՀՆԱ-ի միջին տարեկան 10% աճն ուղեկցվեց արտաքին առևտրային շրջանառության գրեթե 18% աճով: Արտահանման և ներմուծման միջին տարեկան աճը այդ նույն ժամանակամիջոցում համապատասխանաբար կազմել է 17.02 և 19.07%:

Բացի ԵԱՏՄ-ից, ԱՊՀ-ից Հայաստանը նաև մեկ այլ տնտեսական միավորման՝ Սևծովյան տնտեսական համագործակցության (ԱԾՏՀ) անդամ է:

1980-ական թթ. վերջերին տեղի ունեցած քաղաքական վերաձևավորումների արդյունքում Սևծովյան տարածաշրջանի երկրների մեծ մասը կանգնեց փոխհարաբերությունները վերանայելու և համաշխարհային գլոբալ զարգացումներին համապատասխան համագործակցության նոր ուղիներ գտնելու ընտրության առջև: Փնտրելով իրենց ազգային զարգացման ուղիները, Սևծովյան տարածաշրջանի երկրները հանգեցին իրենց ջանքերը միավորելու գաղափարին առաջնորդվելով խաղաղության կայունության ձգտումով: Հիմնադիր երկրները սկզբնապես Թուրքիան, նախկին ԽՍՀՄ երկրները, Ռու-

[1] Թե տնտեսական աճի ապահովման տեսանկյունից արտաքին առևտրային քաղաքականության ո՞ր ուղղությունն է ռացիոնալ, վերջնական եզրահանգման առայսօր չի արժանացել: Եթե հովանավորչությունը հնարավորություն է տալիս զարգացնել ազգային տնտեսությունը, ստեղծել նպաստավոր պայմաններ ներքին արտադրողներին օտարերկրյա մրցակցությունից պաշտպանելու համար, ապա ազատ առևտուրը թույլ է տալիս արտադրության ներքին ծախքերը համեմատել միջազգային ծախքերի հետ՝ ստեղծելով համաշխարհային մրցունակ ապրանքներ: Արտաքին առևտրային քաղաքականությունը ազատ է, եթե ապրանքների տեղաշարժի ճանապարհին սահմանվող արգելքների մակարդակը նվազագույն է: Պետական անվտանգության մասին փաստարկը առաջադրվում է այն հիմնավորմամբ, թե երկրները պետք է իրենց տարածքներում զարգացնեն այնպիսի արտադրություններ, որոնք ռազմական բախումների ժամանակ հնարավորություն տան պահպանելու երկրի տնտեսական անկախությունը՝ գյուղատնտեսություն, էլեկտրաէներգիայի արտադրություն, քիմիական արտադրության որոշ ճյուղեր: Այն նպաստում է նաև «նորելուկ» ճյուղերի զարգացմանը:

մինիան և Բուլղարիան էին, որոնք էլ 1990 թ դեկտեմբերի 19-ին Անկարայում, Թուրքիայի նախաձեռնությամբ, մշակեցին և ներկայացրին համագործակցության ձևավորման հիմնարար սկզբունքները: ԽՍՀՄ փլուզումից հետո ԱՊՀ երկրներից կազմակերպությանն անդամագրվեցին Ռուսաստանը, Ուկրաինան, Մոլդովան, Վրաստանը, Հայաստանը, Ադրբեջանը, ավելի ուշ՝ Հունաստանն ու Ալբանիան: 1992 թ. հունիսին Ստամբուլում հանդիպման ժամանակ երկրները ստորագրեցին Սևծովյան տնտեսական համագործակցության մասին Հռչակագիրը, որում հատկապես ուշադրությունը սևեռված էր երկրների տնտեսական ներուժի և փոխշահավետ տնտեսական համագործակցության բարձրացման հնարավորությունների վրա: ՍԾՏՀ Ստամբուլի հանդիպման ժամանակ նշվեցին նաև այն ոլորտները, որոնք պետք է գտնվեն համագործակցող երկրների ուշադրության կենտրոնում՝ տրանսպորտ, կապ, տեղեկատվություն, ապրանքների ստանդարտացում և սերտիֆիկացում, բնական հումքի արդյունահանում և վերամշակում, գյուղատնտեսություն, անասնաբուժություն և սանիտարական պաշտպանություն, տուրիզմ, առողջապահություն, գիտություն և տեխնիկա, դեղագործություն, տնտեսական և կոմերցիոն տեղեկատվության փոխանակություն, էներգետիկա: Այստեղից կարելի է եզրակացնել, որ ըստ էության ՍԾՏՀ-ն ոչ միայն տնտեսական, այլ նաև սոցիալ-առողջապահական, գիտական համագործակցության նաև՝ սոցիալ-առողջապահական, գիտական համագործակցության լայնածավալ ծրագրերով առաջնորդվող համագործակցություն է, որը միանգամայն տարբերվում է ներկայումս գոյություն ունեցող տնտեսական բոլոր այն խմբավորումներից, որոնք համագործակցում են շեշտված տնտեսական ծրագրերով:

Այսօր ՍԾՏՀ անդամ-պետությունների մեծ մասը բախվում է շուկայական տնտեսության երկարատև անցման շրջանի բազմաբնույթ հիմնախնդիրների հետ, և ամբողջ տարածաշրջանը մխրճվել է փոխակերպման բազմաթիվ ցավոտ գործընթացների և վերակառուցման աշխատանքների մեջ: Տեղական չլուծված տարածայնությունները քայքայում են տարածաշրջանի քաղաքական, տնտեսական և սոցիալական միատարրությունը և խոչընդոտում բազմակողմանի տնտեսական համագործակցության գործընթացին: Հետևաբար, որպեսզի ՍԾՏՀ-ն ապագայում վերածվի շարժընթաց զարգացող տարածաշրջանային տնտեսական կառույցի, անհրաժեշտ է տնտեսական և քաղաքական փոխհարաբերությունները կառուցել փոխադարձ վստահության հիման վրա: Իսկ առանց ներքաղաքական հակասությունների համահարթեցման, հազիվ թե կազմակերպությունն առաջիկայում տնտեսական հաջողություններ ձեռք բերի:

Ինչ վերաբերում է ՀՀ համագործակցությանը տարածաշրջանի երկրների հետ, ապա տնտեսական ինտեգրացման առումով Հայաստանի համար առավել հեռանկարային, քիչ թե շատ վստահելի գործընկերը Վրաստանն է: Հայաստանի և Վրաստանի միջև գոյություն չունեն այնպիսի լուրջ տարաձայնություններ, որ սպառնան երկրների խաղաղ գոյակցությանը: Ավելին, այս երկու պետությունները կապված են դարավոր բարեկամությամբ և ունեն միասնական երկարատև պատմություն Վրաստանը նաև ՀՀ ռազմավարական գործընկերն է, այն մնացած աշխարհի, հատկապես ԱՊՀ երկրների հետ կապող ծովային, մասամբ էլ՝ ցամաքային ուղին է: Հետևաբար, անհրաժեշտ է ըստ ամենայնի ընդլայնել ու ամրապնդել Վրաստանի հետ տնտեսական կապերը՝ անկախ ՀՀ գործընկեր երկրների, հատկապես Ռուսաստանի նկատմամբ Վրաստանի դիրքորոշումից:

Այս համագործակցության շարժիչ ուժը պետք է լինի աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական շահերի ապահովումը:

Ընդհանուր առմամբ, Հայաստան-Վրաստան փոխադարձ առևտրում նկատելի են դրական միտումներ, հատկապես ՀՀ արտահանման տեսանկյունից: Ուստի Վրաստանի հետ տնտեսական ինտեգրացման ելակետային մոդելը կարող է կառուցվել Առևտրի Համաշխարհային Կազմակերպության հիմնարար սկզբունքների հիման վրա (որին անդամակցում են երկու երկրները), ինչը թույլ կտա ակտիվացնել արտահանման ներմուծման ծավալները, վերացնել մաքսատուրքերը, ինչն էլ կհանգեցնի երկու երկրների ներքին շուկաներում ապրանքների գների նվազմանը, սպառման ավելացմանը: Ներքին շուկայում ապրանքների գների նվազումը բարենպաստ մրցակցային դաշտ կձևավորի ներքին արտադրողների համար: Մաքսատուրքերի վերացումը թույլ կտա նաև փակել մաքսանենգության ճանապարհը և վերացնել տարբեր ճանապարհներով մաքսային հարկումից խուսափելու դեպքերը:

Մյուս կողմից, Իրանի՝ որպես ՀՀ ռազմավարական գործընկերոջ դերը տարածաշրջանային տնտեսական համագործակցության զարգացման գործընթացներում չի կարելի թերագնահատել: Սակայն այն իրողությունը, որ Իրանից արտահանվող ապրանքները մրցակցային առավելություններ ունեն միայն ցածր ինքնարժեքի առումով, ակնհայտ է հայ-իրանական արտաքին առևտրային կապերում: Իրանից ներմուծվող ապրանքների բաժինը ՀՀ համախառն ներմուծման մեջ իր ծանրակշիռ տեղն է զբաղեցնում: Վերջին տարիներին Հայաստան - Իրան առևտրային կապերի թուլացումը պայմանավորված է որոշ հանգամանքներով: Նախ՝ 1990-ական թթ. սկզբին Իրանը Հայաստանի գլխավոր առևտրային գործընկերներից էր: Դրանից հետո հայկական շուկա մուտք գործեցին ռուսական և եվրոպական ապրանքներ, որոնք ավելի որակյալ էին, բնականաբար դուրս մղեցին պարսկական ապրանքները ՀՀ շուկայից:

Չնայած 2021-2022թթ. արտաքին հաղորդակցությունները ապաշրջափակելու ուղղությամբ ձեռնարկվող առանձին քայլերին, տարածաշրջանի մյուս հարևան երկրների՝ Թուրքիայի և Ադրբեջանի հետ ՀՀ տնտեսական ինտեգրումը բախվում է բազմաթիվ հիմնախնդիրների հետ, որոնք գերազանցապես քաղաքական բնույթ ունեն:

Հաշվի առնելով տարածաշրջանի մարտահրավերները՝ Հայաստանի անվտանգության առանցքային երաշխիքը Եվրասիական ինտեգրումն է, Ռուսաստանի և նրա դաշնակիցների հետ Հանրապետության տնտեսական և ռազմաքաղաքական միությունը: Ակնհայտ է, որ ինտեգրացիոն գործընթացները և ռազմաքաղաքական համագործակցությունը սերտորեն փոխկապակցված են: ԵԱՏՄ-ն զգալի հնարավորություններ է ստեղծում Հայաստանի տնտեսական ներուժի աճի համար: 2022թ. կանխատեսումները ևս լավատեսության հիմք են տալիս:



Գծանկար 5. ԵԱՏՄ երկրների ՀՆԱ-ի աճի կանխատեսումները 2022թ.

Աղբյուրը՝ Եվրասիական զարգացման բանկի կանխատեսումներից:

Ներկայացված թվերից պարզ է դառնում, որ Հայաստանը կարող է առավելագույնս օգտվել ԵԱՏՄ անդամակցությունից: Այդ հնարավորությունները թույլ են տալիս ապահովել երկրի տնտեսական և քաղաքական էական զարգացումն ու ամրապնդումը, ինչպես նաև զգալիորեն կավելացնի նրա ներուժն ու հնարավորությունները միջազգային ասպարեզում: Հայաստանի անդամակցությունը ԵԱՏՄ-ին ռազմավարական կարևորության ունի, ինչը Հայաստանին երաշխավորում է տնտեսական անվտանգություն և տնտեսական զարգացում: Եվրասիական տնտեսության ձևավորման գործընթացում որպես լիիրավ մասնակից ընդգրկվելը արդյունավետ քայլ է ոչ միայն Հայաստանի, այլ նաև Արցախի համար և թույլ է տալիս կայուն և հավասարակշռված տնտեսական զարգացման հնարավորություններ և հեռանկարներ ունենալ տեսանելի ապագայում: Սա այն թրենդն է, որն այսօր Հայաստանի և Արցախի համար ամենահրատեսականը, արժեքավորն ու արդիականն է: Ստեղծված հնարավորություններն առավելագույնս օգտագործելու համար անհրաժեշտ է նաև ճշգրտել տնտեսական քաղաքականության առաջնահերթությունները՝ հաշվի առնելով ԵԱՏՄ-ին անդամակցության տնտեսական, օրենսդրական և տեխնիկական պահանջները: Անհրաժեշտ է օգտագործել ԵԱՏՄ ստեղծման մասին պայմանագրով ստեղծված բոլոր հնարավորությունները՝ համատեղ ձեռնարկություններ ստեղծելու համար: Առկա են պաշտպանական արդյունաբերության, նանոտեխնոլոգիաների, մեքենաշինության, էլեկտրատեխնիկայի և սարքաշինության, շինանյութերի արտադրության մեջ ներդրումների ներգրավման և գունավոր մետաղների ձուլվածքների կառուցման, քիմիական արդյունաբերության, թեթև արդյունաբերության, գյուղատնտեսության և սննդի արդյունաբերության, դեղերի արտադրության, զբոսաշրջության զարգացման ոլորտներում ԵԱՏՄ երկրների համագործակցության հեռանկարները:

Հիշատակված և այլ տարածաշրջանային միավորումներին Հայաստանի անդամակցությունը պետք է ծառայեցվի իր և Արցախի մրցակցային առավելությունների ի-

րացմանը: Իր հերթին, այս խնդիրը պահանջում է հստակ չափորոշիչներով ազգային մրցակցային առավելությունների բացահայտմանը և դրանց հետևողական իրացմանը[1]: Նույն նպատակին պետք է ծառայեցվի ՀՀ անդամակցությունը միջազգային կազմակերպություններին:

Կարևոր է հաշվի առնել նաև այն իրողությունը, որ վերջին ամիսների ընթացքում տեղի են ունենում հակամարտող կողմերի միջև մերձեցման միջնորդված տարբեր փորձեր:

Եզրակացություն

Այսպիսով, հարկավոր է ծանոթանալ և վերլուծել ժամանակակից ինտեգրացիոն գործընթացներին առնչվող քայլերը, բացահայտել տարածաշրջանային ինտեգրման հիմնական միտումները, ներկայացնել Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ազգային մրցակցային առավելություններն իրացնելու հնարավորությունները, դրանց կյանքի կոչելու անհրաժեշտությունը, ինչպես նաև վերլուծել նման ձևաչափով Հայաստանի և Արցախի՝ տարածաշրջանին ինտեգրելու հեռանկարները: Այս ամենին կարող են նպաստել ինչպես Հյուսիս – Հարավ մայրուղու գործարկումն, այնպես էլ օգտագործելով եռակողմ՝ ՀՀ – Իրան – Հունաստան համագործակցության հնարավորությունները: Վերջապես, պահպանելով ամուր և օրեցօր սերտացող կապերը ՌԴ-ի հետ, անհրաժեշտ է նաև մտածել դիվերսիֆիկացնելու Հայաստանի ռազմավարական գործընկերությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. http://stat-nkr.am/
2. Արցախի տնտեսական ներուժը «նոր սահմանազատումից» հետո. սահմանից անդին մնացած հնարավորություններ... www.Investmagazine.am

REFERENCES

1. http://stat-nkr.am/
2. Arcaxi tntesakan nerowjhy' «nor sahmanazatowmic» heto. sahmanic andin mnacac' hnaravorowt'yownner ... www.Investmagazine.am

РЕЗЮМЕ

Армения и Арцах после войны: факторы, необходимые для единого рынка и внутренней интеграции

Манасерян Татул

доктор экономических наук, профессор

рукаводитель исследовательского центра "Альтернатива"

При анализе перспектив интеграции экономик Армении и Арцаха в регионе важно учитывать тот факт, что, в отличие от Республики Армения, Арцах, как непризнанное международным сообществом государство, лишен возможности официально и напрямую установить кооперационные связи с любой страной. Единственная связь с внешним миром –

[1] Մրցակցային առավելությունների չափորոշիչները կներկայացվեն հաջորդ բաժնում:

это, пожалуй, гуманитарные отношения. Поэтому, помимо функции гаранта безопасности, Республика Армения является единственным государством, которое может помочь Арцаху представить себя на внешних рынках. Это, в свою очередь, требует разумного использования имеющегося арсенала экономической дипломатии, ведь представить Арцах внешнему миру можно только опосредованно.

Таким образом, необходимо ознакомиться и проанализировать этапы, связанные с современными интеграционными процессами, выявить основные тенденции региональной интеграции, представить возможности реализации национальных конкурентных преимуществ в рамках Евразийского экономического союза, необходимость реализации их, а также проанализировать перспективы интеграции Армении и Арцаха в регион в таком формате. Всему этому может способствовать запуск автомагистрали Север-Юг, а также использование возможностей трехстороннего сотрудничества: РА-Иран-Греция. Наконец, сохраняя прочные и ежедневные связи с Россией, необходимо также думать о диверсификации стратегического партнерства Армении.

Ключевые слова. Арцах, региональная интеграция, ЕАЭС, конкурентные преимущества, 44-дневная война.

SUMMARY

Armenia and Artsakh after the War: Factors Necessary for the Single Market and Internal Integration

Manaseryan Tatul

Head of «Alternative» Research Center

Doctor of economics, professor

Yerevan, Armenia

When analyzing the prospects of integration of the economies of Armenia and Artsakh in the region, it is important to take into account the fact that, unlike the Republic of Armenia, Artsakh, as a state not recognized by the international community, is deprived of the opportunity to officially and directly establish cooperation ties with any country. The only connection with the outside world is perhaps humanitarian relations. Therefore, apart from the function of security guarantor, the Republic of Armenia is the only state that can help Artsakh to present itself in foreign markets. This, in turn, requires a judicious use of the existing arsenal of economic diplomacy, because Artsakh can be presented to the outside world only in a mediated way.

Thus, it is necessary to get acquainted with and analyze the steps related to modern integration processes, to identify the main trends of regional integration, to present the possibilities of realizing national competitive advantages within the framework of the Eurasian Economic Union, the need to implement them, as well as to analyze the prospects of integrating Armenia and Artsakh into the region in such a format. All of this can be facilitated by the launch of the North-South highway, as well as by using the possibilities of trilateral cooperation: RA-Iran-Greece. Finally, while maintaining strong and day by day ties with Russia, it is also necessary to think about diversifying Armenia's strategic partnership.

Key words: Artsakh, regional integration, EAEU, competitive advantages, 44-day war